Մատենագրութեան ընտիր հեղինակութիւն մը – երկու մեծ հատոր – ընծայեց նոյն լեզուին և մատենագրութեան մէջ յառաջադէմ աշակերտին, կարպիս Գասպարեանի։

Հանդէսը վերջացաւ. գոհութեան նշոյլն ամենուն երեսին վրայ կը ցոլար հանդէպ Հայաստանի նորընծիւղ յոյսերուն. ամէն ոք լուին կամ խօսուն ուրախութիւն և գոհութեան սիրազեղ մաղթանք մ'ունէր ամէն շրջանաւարտի համար. յետին բաժակն էր ցնծութեան որ վարժարանի սեմերուն վրայ կ'ըմպէին. և Նորածագ արշալոյսին, Նոր կեանք, Նոր ասպարէզ պիտի թեւակոխէին։ Կը մաղթենք լիասիրտ, որ այդ ասպարէզը Նորանոր յաղթանակներու մրցարան մը դառնայ ամենուն՝ երջանկացնելու զիրենք և իրենց հետ ամբողջ Հայաստան։

Հ. ԵՂԻԱ ՓԷՉԻԿԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆԸ

ԴԵԿՐԵՏ

Հ. Ս. Խ. Հ. Ժողովրդական կոմիսարների խորհրդի հնութիւնների պահպանութեան մասին։

1. Հանրապետութեանս սահմաններում գտնուած ամեն տեսակի հնութեան յուշարձաններ՝ կանգուն, կիսաւեր կամ բոլորովին աւերակ, առանձին–առանձին թէ խմբական ձեւով, իրենց ամբողջ շրջաններով, ուր պահուած են նրանց հետքերը, այսինքն նախկին բնակութեանց վայրերը, վանքեր, ամրոցներ, քաղաքատեղիներ, գիւղատեղեր, կամ առանձին կերտուածներ, լինին նրանք գետնի երեսին թէ հողով ծածկուած, իրենց նախկին տեղում թէ առաջուց տեղահան արուած — կազմում են պետական սեփականութիւն եւ պետք է մնան միանգամայն անաղարտ եւ անձեռնմխելի։

2. Հնութիւնների պահպանութիւնը պետական կարեւորագոյն խնդիր է, որ ի կատար է ածում Լուսաւորութեան Ժողովրդական Կոմիսարիատը՝ «Հնութիւնների պահպանութեան կոմիտէի» միջոցով։

3. Հնութիւնների ուսումնասիրութիւնն ազատ է բոլոր գիտական կազմակերպութիւնների և անհատների համար, սակայն առանց որ և է փոփոխութիւն մտցնելու նրանց արտաքին ձեւի և դրութեան մէջ։

4. Ոչ ոք իրաւունք չունի առանց Հնութիւնների Պահպանութեան կոմիտէի պաշտօնական թոյլտուութեան՝ կատարելու որ և է հնութեան պեղում, նորոգում, վերականգնում կամ տեղափոխում և առհասարակ հնութիւնների հետ կապ ունեցող որ եւ է այլ աշխատանք։

5. Խստիւ արգելւում է հնութիւնների արտահանումը, քանդելն ու փչացնելը և յուշարձանները կամ նրանց բեկորները իբրև նիւթ գործածելը նոր շինութիւնների համար։

6. Հնութիւններ ունեցող վայրերում և նրանց կից շրջաններում որ և է հանրօգուտ շինութեան (ճանապարհների, կամուրջների, ջրանցքների, հասարակական պահեստների և այլն) կառուցման դէպքում՝ ձեռնարկողները պարտաւոր են նախօրօք

digitised by A.R.A.R.@

ստանալ Հնութիւնների Պահպանութեան կոմիտէի թոյլտուութիւնը։

7. Հնագիտական շրջանները բոլորովին չեն ենթարկւում հողաբաժանութեան. նրանց վրայ արգելւում է շինարարական կամ գիւղատնտեսական աշխատանք կատարելը։

8. Պատահական կերպով երեւան եկած հնութիւնների մասին անմիջապէս պէտք է յայտնել Հնութիւնների Պահպանութեան կոմիտէին։

9. Բոլոր վարչական մարմիններին և անձերին հրահանգւում է արթուն հսկողութիւն ունենալ հնութիւնների պահպանութեան վրայ։

10. Սոյն դեկրետը խախտողները ենթարկւում են պատասխանատուութեան Քրէական Օրէնսգրքի համաձայն։

11. Լուսաւորութեան ժողովրդական կոմիսարին յանձնարարւում է հրատարակել համապատասխան հրահանգ սոյն դեկրետի կիրարկութեան մասին*։

* Այս «Դեկրետ»ը Երեւան հրատարակուած է 1923 Դեկտ. 18ին։ Ստորագրած են Ժողովրդական Կոմիսարի Խորհուրդին նախագահը Սրապիոնեան–Լուկաշին և քարտուղարը։ Ծ. Խ.

ՄԱՅՐ ԴԻՒԱՆ

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ.—Ի Ս. ՂԱԶԱՐ

(Տար. տես բազմ. 1924, էջ 220)

ՀԴ.

Առեւտրական կեանքի ու քաղաքական դէպքերու անցեալ յիշատակնե՛ր մը ահա։

Գերյարգելոյ Աբբայ Հօրդ իմոյ, և Տեառն Տեառն Մխիթարայ Աստուածաբանութեան վարդապետի

... ... Թէ ի կողմանէ ապրուստի և պատերազմի հարցանէք, թանկ և դժուարագիւտ, զհացն խլելով առնուն, զձէթն և զարդար եղն փունթն 30 ստակ, հաւկիթն երեքն հինգ ստակ, և ոչ գտանի. աստ մեծ խումբ մի երկու աւուր հեռի ի կողմն պօսնայու ձմեռեն. և այլք փոքր խումբք աստ և անդ. փոխանորդ և հրամայօղ և կառավարօղ է ձէնռալ Ֆիլիպօն. ասեն թէ ի գարնան գալոց է ձէնռալ Մալֆին, Սեռական կառավար, թէպէտ ինքն հրաժարեալ վասն ծերութեան որ 60 ամաց է ասեն։ Իսկ տաճիկքն սիրտ առեալ զօրացեալ գազանացեալ յաւուրս յայսոսիկ ասպատակիչք հասեալ մինչև ի կողմունս օսոմյայու աւար հարկանէ քանթէ, գերէ, սպանանէ, այժմիկ լուաք զայսոսիկ. երկիւղն պատերազմին ապագայի ամի հալէ զոսկերս իմ...։

Գրեցաւ յամի Տեառն 1737ին
Նոյեմբերի 22ին
ի տօնի Ջէչիլեայ կուսին
3 գիր, ի Պելրգատ

Գերյարգութեան ձերում
Յեամ պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի